01/10.1/8935-09
2009-12-07

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Զարուհի Փոստանջյանի, Լարիսա Ալավերդյանի, Անահիտ Բախշյանի, Վարդան Խաչատրյանի, Արմեն Մարտիրոսյանի, Ստյոպա Սաֆարյանի և Ռաֆֆի Հովհաննիսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ։

Ցեղասպանությունը ներառում է ոչ միայն բուն հանցավոր ակտը, որն ուղղված է ամբողջ մարդկության դեմ, այլ նաև դրա հետևանքները։

Ցեղասպանությունը, իր հետևանքների ամբողջության մեջ դատապարտվել է ներկայումս գործող ՀՍՍՀ Գերագույն Խորհրդի ընդունած 1988 թվականի նոյեմբերի 22-ի N 1401-X1 օրենքով, որի հիման վրա էլ ապրիլի 24-ը հայտարարվել է «Հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր»:

Առաջարկվող նախագծով Ցեղասպանության զոհերի հիշատակի հետ մեկտեղ, Ցեղասպանության հետևանքներից մեկի՝ հայրենազրկման առանձնացված դատապարտումը նվազեցնում է գործող օրենքի նշանակությունը (պատմական, քաղաքական, իրավական, բարոյական և այլ տեսանկյուններից):

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ Շավարշ Քոչարյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

*Նախագիծ*
*Պ-751-02.11.2009-ՊԻ-010/0*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

**«Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին**

***Հոդված 1.*** Հայաստանի Հանրապետության 2001 թվականի հուլիսի 24-ի, ՀՕ-200 «Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (հետայսու՝ օրենք) 5-րդ հոդվածը վերաշարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«*Հոդված 5.* Ցեղասպանության զոհերի հիշատակի եւ Հայրենազրկման դատապարտման օր՝ նշվում է ապրիլի 24-ին, ոչ աշխատանքային օր։»

***Հոդված 2.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ցեղասպանությունը՝ որպես հետեւանք, հանգեցրեց հայության Հայրենազրկման եւ Հայրենասպանության։ Իր իսկ բնօրրանում սպանդի ենթարկված ժողովուրդը զրկվեց իր պատմական հայրենիքից։ Այս իրողությունը մեկ ընդհանուր ողբերգություն է, որն առավել ամբողջական է դարձնում Ցեղասպանության փաստը։ Հարկավոր է կատարված ողբերգությունն ընկալել այդ ամբողջության մեջ, եւ հիշատակի օրը արժեւորել այդ համատեքստում։

Սույն օրենքի ընդունմամբ կամբողջանա Ցեղասպանության իրական պատկերը, դրանով կամրագրվի հայկական հողերից նրա բնիկ ժառանգների հիմնարար եւ օրինական պատմական իրավունքներից զրկելու դատապարտումը։ Ցեղասպանությունը ոչ միայն խլել է մեկուկես միլիոն անմեղ մարդկանց կյանք, այլ նաեւ միլիոնավոր հայերի զրկել է սեփական բնօրրանից. այն ոչ միայն մի ժողովրդի, այլեւ մի քաղաքակրթության, մի մշակույթի, մի ողջ կենսակերպի սպանություն է, ուստի անհրաժեշտ է այս փաստը նույնպես արձանագրել եւ հիշատակել։ Այն թույլ չի տա մեր ժողովրդի հավաքական հիշողությունից ջնջել մարդկության դեմ իրագործված այդ ոճիրը, որը հայ սերունդներին զրկել է իրենց քաղաքակրթությունից, ժառանգությունից եւ հայրենիքից։

Անհրաժեշտ է արձանագրել, որ սույն խնդիրը Հայաստանի Հանրապետության քաղաքական օրակարգում արդիական է, քան երբեւէ. չուրանալ եւ պահպանել Ցեղասպանության զոհերի հիշատակը, պետականության արժանապատվությունը։ Մինչ միջազգային հանրության կողմից ճանաչվի կանխամտածված կերպով մի ամբողջ ժողովրդի բռնազրկումն իր հայրենիքից, Հայաստանի Հանրապետությունը պետք է տասնամյակներ ի վեր շարունակվող ժխտողականությանը վերջ դնելու ներուժը կրկնապատկի։ Սույն օրենքի ընդունմամբ Հայաստանի Հանրապետությունը վերստին կարժեւորի Ցեղասպանության զոհերի հիշատակը եւ Հայրենազրկման իրողությունը։